

առաջին գիրսն, որ պատասխանի միւս կողմի արգոյն, զամենայն Յակոբն ընդ իւր պահէ և եկեալ աստ զերկու թուղթն բացաւ, որ պատճէն ասացաւ » (1):

Կաթողիկոսին գրութիւնները արդիւնք չեն ունենար: Մուղնեցիի կողմնակիցները՝ Յակոբ Ղոզպեքճիսիի հետ ի զուր կը Զանան զայն Պատրիարքական Աթոռին վրայ վերահաստատել: Անպակաս կ'ըլլան վէճերն ու կռիւները, որոնք աւելի կը սաստկանան Մարտիրոս Կաֆացիի ամբոխավարութեամբ ընդդէմ Մուղնեցիի, որ ի վերջոյ կը ստիպուի Սկիւտար քաշուիլ, երբ Էղիազարեանք մասնաւորապէս Ռուհիջան վանեցին և միւս աշխարհական տեղապահները խորհրդակցաբար գրութիւն մը կը կնքեն, յայտարարելով. « Մեք քաղաքացիքս յամէն եկեղեցեաց ուրոյն ուրոյն հնազանդ եմք թագաւորին խեթիչերիֆին, որ ի մեր քաղաքս սեւազլուխ պատրիք կամ առաջնորդ անունով չկոխէ և չպահենք » (2):

Սակայն Մուղնեցին և իր կուսակիցները ժամանակ մը կը շարունակեն տակաւին իրենց պայքարը (3): Եղիազարեանք

---

(1) Օրագրութիւն Երեմիա Զելեպի Քեօմիւրճեանի. հրատ. Մետրոպ Արքեպ. Նեանեան, Երուսաղէմ, 1939, էջ 103 - 105:

(2) Աճղ, 105 - 111:

(3) Աճղ, 134, 137: